

Այս կռակա վրիպակները ծագել են «իսկ» բառի երկու նշանակութեանց շփոթութիւններից և այսչափ երկար դարերով դիմացել են բազմաթիւ ընդօրինակողների, հրատարակիչների, համեմատողների, թարգմանիչների քննադատների փորձիչ և հետախուզող ակնարկներին։ «Իսկ» փոխանակ հասկացուելու «բուն» ի մտքով այն է՝ «բուն գրքերից» կամ «խփուն մատեաններից» հասկացուել է իբրեւ «բայց» որով և կետագրութիւնը շեղուել է, շեղուել է և ամբողջ պարբերութիւնը։

«Իսկ» ի սխալ ըմբռնութից առաջացած նմանօրինակ մի սխալ կայ և առաջին դիրք առաջին գլխում, բայց այդ արդէն ուղղուած է Աննակիր 1881 - ի Խորենացու հրատարակութեան մէջ։

ՄԻԱՐԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

ՔԵՄԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԿԻՐ

Ռուսաց «Моск. перк. Вѣд.» Կանդէսը զարթեցնում է խնդիր «Լեւոնդա-դադական» — Լեւոնդադական Կաթողիկոսի և Կրօն հնար է նշանակաւորել և հիմաւոր մշակման մասին։ Ամենից առաջ, ասում է լրագիրը, անհրաժեշտ է այս խնդրի յաջողութեան համար եկեղեցական դասի կատարեալ համակրութիւնը գործին և ընդ նմին նորա եռանդուն գործակցութիւնը։ Բայց դորա համար ցանկալի էր, որ եկեղեցականը զբաղուէին առանձին քաղաքների, գիւղերի, տաճարների, մատուռների, հրաշագործ պատկերների և այլ եկեղեցական — հնախօսական նկարագրութիւններով։ Յայտնի բան է, այսպիսի մասնաւոր նկարագրութիւնք ինքն ըստ ինքեան շատ մանրամասն կլինեն և յաճախ ունենում են տեղական նշանակութիւն, բայց այսպիսի նիւթերի գումարից թեմի ընդհանուր պատմագիրը կարող կլինի ընտրել այն, ինչ որ ամենքի համար է հետաքրքրական։ Եւ ո՞ւմ աւելի անկ է և վայել ասում է լրագիրը, զբաղուել այս նկարագրութիւններով եթէ ոչ եկեղեցական դասին։ Այս կամ այն եկեղեցու պատմութիւնն ո՞ւմ համար աւելի հետաքրքրական է քան թէ այն քահանայի համար, որին Տէրը նշանակել է պահապան և ծառայ այն եկեղեցւոյ։ Ո՞ւմ համար աւելի հետաքրքրական է մի ծխի պատմութիւնն, եթէ ոչ նորա հովուի համար, Եկեղեցւոյ և ծխի պատմական հետազոտութիւնը կարող է երբեմն և գործնական նշանակութիւն ունենալ (խնդիր հողային տիրապետութեան իրաւանց մասին), ուստի և իւրաքանչիւր ծուխ կատարեալ իրաւունք ունի սպասելու ծխական եկեղեցւոյ պատմութեան նկարագիրը նախ նորա քահանայից, և ապա նշոնպէս և նորա այլ պաշտօնեաներից։ Բայց գծադրարար եկեղեցականք, մանաւանդ գիւղական եկեղեցականք։

շատ սակաւ են հետաքրքրուում արժանայիշատակ բաներով և բնդհանրապէս գիւղերի պատմութեամբ: Յոյժ ցանկալի է, որ գիւղական եկեղեցականաց վերաբերումն գէպի տեղական պատմութիւնը փոխուի: որովհետեւ նորա մասնակցութիւնն այս դործի մէջ անհրաժեշտ է: Զորօրինակ ո՛վ աւելի լաւ կարող է ժողովել տեղական աւանդութիւնք, զբաղուել գիւղի տեղագրութեամբ և նորա կենսական վիճակով: Բայց եթէ քահանայն, որ ըստ իւր պաշտաման ամենից աւելի թափանցում է ժողովրդի կեանքի մէջ: Հոռապէնք ուրեմն: Վենսական ալիքն, առանց սպասելու հետախուզողներին, սրբում տանում է վերջին պատմական հետքերը: Մեռնում են ծերունիք և իրանց հետ գերեզման են տանում գրի չառնուած աւանդութիւնք և անձնական տպաւորութիւնք: Ժամանակի ազդեցութիւնից եկեղեցեաց թանգարաններում և պահարաններում փրտում են հին վկայութիւնք: Անհրաժեշտ է լինում վերականգնել տաճարը և սորա նախկին կերպարանքը մոռացուում է: ջնջուում են արձանագրութիւնք քարեայ յիշատակարանների վերայից, նոյն իսկ այս յիշատակարանները ոչնչացնուում են առանց կարիքի: Ի զուր, Ինչ որ մենք այսօր չենք նշանակել մեր ժամանակագրութեան մէջ, այն վաղը անել չենք կարող: որքան էլ ցանկանայինք: Ուրեմն շտապենք:

Ռուս հրապարակախօսը վերոյիշեալ առաջարկը պատմական փիճակագրական նկարագրութիւն կազմելու մասին տնում է Մոսկուայի թեմի վերաբերութեամբ, որոյ մեծ մասի նկարագրութիւնը կայ անշուշտ, իբրեւ կենդրոնական և աւելի զարգացած թեմի, որոյ մէջ թէ եկեղեցականք աւելի յառաջացած են գիտութեանց մէջ, համեմատելով միւս թեմերի եկեղեցականաց հետ և թէ բազմութիւ են դպրոցներն իրանց ուսուցիչներով, որոնք հետաքրքրուում են թէ ժողովրդի կեանքով ու սորա մէջ տեղի ունեցող ամեն մի փոփոխութիւններով և թէ նոցա մէջ պահպանուած աւանդութիւններով: Բայց և այնպէս պ. հրապարակախօսը դեռ շատ բան թերի մնացած և ապագայ կորստին մատնուելու վտանգին ենթարկուած է համարում և յորդոր է կորդում շտապել կազմելու թեմի մանրամասն նկարագրութիւնը: Յայտնի բան է, որ այդ առաջարկն աւելի յարմարաւոր կլինէր միւս թե-

մերի վերաբերութեամբ, որոնք ամեն կողմանէ աւելի յետ
հն՝ մնացած քան Մոսկուայի թեմը:

Եթէ Ռուս Հրապարակախօսը մեծ երկիւղ է տածում որ
իրանց թեմերում կարող են շատ պատմական - հնախօսական
նիւթերի կորուստներ լինել, ի՞նչ պիտի ասենք մենք մեր թեմերի
վերաբերութեամբ, որոց իւրաքանչիւր քայլը բովանդակում է
անթիւ պատմական - հնախօսական և վիճակագրական — տե-
ղագրական նիւթ: Ո՞ր երկիր կարող է իւր անցեալի հնութեամբ
համեմատուել մեր հայրենեաց հետ, անցեալի, որ լի է եղել գոր-
ծունէութեամբ և սորա հետեանք անթիւ յիշատակարաննե-
րով, որ տղքն ենթարկուած է եղել վիճակի այնպիսի փոփոխու-
թեանց ինչպէս մերը, այնպիսի սոխպողական գաղթականու-
թեանց ինչպէս մեր ազգը, Այսօր գոյութեամբ է մեր հայրենիքում
գտնել մի քաղաք, մի գիւղ, որոյ բնակիչք միայն բնիկնոր լի-
նէին և բազմիցս նոր գաղթական յաւելուածներ ունեցած չլի-
նին, որոնք բերած են իրանց հետ նոր աւանդութիւնք, պատ-
մական տեղեկութիւնք, և հնութիւնք ամեն տեսակի:

Այսօր հայ թեմերի մեծ մասն աւելի կարօտ են վերոյիշեալ
առաջարկի իրագործման իրանց վերաբերութեամբ, ունելով
իրանց մէջ անթիւ նիւթեր վերոյիշեալ հրագրի իրագործման
համար: Կայ հայ թեմ, որի մէջ չգտնուին հարիւրաւոր
պատմական աւերակներ՝ վանքեր, եկեղեցիք, աւաններ ու գե-
րեզմանոցներ կամ կիսաշէն վանքեր իրանց բազմաթիւ հնու-
թիւններով ու ձեռագիր մատենաներով: Կայ մի հայ գիւղ,
որ չտայ բաւականաչափ պատմական վիճակագրական նիւթ
թէ իւր անցեալով և թէ ներկայով — հէնց նոցա կրած փոփո-
խութիւնք վերջին դարուս մէջ, որոյ համար կենդանի վկայք
դեռ կգտանուին ամեն ուրեք, բաւական նիւթ կարող են տալ:
Մեր իւրաքանչիւր գիւղում կգտանուին շատ աւանդութիւնք
և սովորութիւնք, որոնք մեծ լոյս կարող են ձգել անցեալի
վերայ և հիմն դառնալ ապագայի կազմակերպութեան. որով-
հետեւ ժողովրդի կանոնաւոր զարգացման համար անհրա-
ժեշտ է կապն անցեալի, ներկայի և ապագայի մէջ:

Թէ կենդանական և թէ տեղական վարչութեանց համար անհրաժեշտ է ունենալ մանրամասն տեղեկագիր այն երկրի մասին, որոյ կառավարութեան հոգսը, կեանքի սընէ ճիւղի վերաբերութեամբ, յանձնուած է նրան: Պաշտօնական տեղեկութիւնք և ատենական գրագրութիւնք շատ անբաւարար են մի իշխանաւորի համար իւր ունեցած պարտականութիւնքը կատարել կարողանալու համար: Աւստի և մեր հայ թէ կենդանական և թէ տեղական հոգեւոր իշխանութեանց համար, իրանց գործունէութիւնն, իրանց ցանկացածի չափ, օգտակար անելու համար, անհրաժեշտ են մեր թեմերի մանրամասն տեղեկագիրք, վերոյիշեալ ծրագրով: Այսպիսի տեղեկագիրք ուղեցոյց կարող են լինել հոգեւոր վարչութեանց իրանց խնամքն արդարութեամբ ստրածելու ամեն ուրեք, աւելի կարօտին աւել իւր օգնութիւնն ու հոգացողութիւնը նսեւրելով, մինչդեռ այժմ նոքա գրեթէ խաւարի մէջ գործում են, իրանց ուշքը դարձնելով ակամայ այն տեղերի վերայ, որոնք կամ հանգամանքների բերմամբ և կամ մի պատահական դէպքից ծագած աղմուկով գրաւում են նոցա ուշագրութիւնն, այն ինչ գուցէ անթիւ աւելի կարօտ յետ ընկած կետեր լուռ ու մունջ հառաչելով ռպասում են իրանց հոգեւոր հայրերի ուշադրութեան և խնամոց, որոնք անդիտակ իրանց զաւակաց դառն վիճակին, անուշագիր են թողնում այդպիսեաց, որոնք ընկճուում են ժամանակի ձախող ազդեցութեան ներքոյ և կորչում: Այսպիսի հանգամանքում յանցանքը ոչ հոգեւոր իշխանութեանն է և ոչ էլ ժողովրդեանն, այլ ժամանակի բերմունքի: Օր աւուր բղխէ զբան և գիշեր գիշերի ցուցանէ զգիտութիւն:

Զէ՞ որ բանական մարդու պարօքն է համեմատ զարգացման մաքառելու և դիմադրելու բնութեան և ժամանակի վիասակար բերմունքների դէմ: Ժամանակի տարած մեր կորուստները թող խրատ լինին մեզ և բաւական համարենք նրանց և աշխատենք գէթ այսուհետեւ քիչ կորուստ ունենալու: Պէտք է հասկանանք, որ ամեն մի անհետացող

աւերակ, ամեն մի փտող ձեռագիր, ամեն մի հնութիւնից մաշուող իր, ամեն մի շատ պատմական ու տեղագրական տեղեկութիւնք և աւանդութիւնք իրան հետ գերեզման տա- նող ծերուհու մահը կորուստ է մեզ համար: Ամեն մի կար- եաց մասին իւր ժամանակ չհոգալն, անդառնալի կորուստ- ներ կպատճառէ, օգնութեան ձեռք չհասցնելն այնտեղ ուր հարկ է, անդարմանելի ցաւ կարող է պատճառել ապագային: Աւատի և ցանկալի է, որ օր առաջ հոգս տանուէր մեր վի- ճակների մանրամասն տեղեկագրութիւնք կազմելու վերայ:

Մենք կարծում ենք, որ ամեն թեմի և վիճակի հոգեւոր իշխանութիւնք այս մասին հոգալն իրանց թէև ծանր, բայց աչքի առաջ ունենալով նորա անթիւ օգուտն, ամենաքաղցր պարտքը կհամարեն: Նոքա իրանց թեմերի ու վիճակների քա- ղաքում կամ մի անձի և կամ մի մասնաժողովի միջնորդու- թեամբ կարող են հաւաքած անմշակ նիւթերը մշակել տալ և այսպէս կենդրոնական հոգեւոր իշխանութեան հասցնել և կամ եթէ հնար չունին այդ անելու, հէնց անմշակ նիւթերն ուղարկել, որոնք կենդրոնական վարչութիւնը կարող է մշա- կել տալ և իւրաքանչիւր տեղական իշխանութեան ուղարկել մշակած տեղեկագիրն ի հրահանգութիւն: Իրաւ է գործը բազմաճիւղ է և դժուար. բայց դժուարութիւնը չէ կարող գործի սկզբնաւորութեան արգելք լինել. թող նա սկզբում անկատար լինի, բայց տարիից տարի նա կկատարելագործուի նոր ստացուած և ստուգուած տեղեկութիւններով և գէթ մի տասնեակ տարիից յետ կունենանք կանոնաւոր և ճիշդ ման- րամասն տեղեկագրութիւնք: Քաղաքների վերաբերութեամբ գործը հեշտ է և դիւրութիւններ շատ կան, քանի որ գոցա մէջ գրագէտ թէ եկեղեցականներ և թէ աշխարհականնե- րսւականաչափ կան, որոնք կարող են այդ գործը ճշգու- թեամբ կատարել: Դժուարութիւնը աւանների և գիւղերի ու սոցա շրջակայքում հղած հնութեանց վերաբերութեամբ է: Այստեղ գլխաւորապէս գործողներն, իբրև աւելի գրա- գէտներ ու ժողովրդի կեանքին մօտիկ ծանօթ անձինք, պի-

աի լինին քահանայք և այլ եկեղեցական պաշտօնեայք, որոց վերայ տեղական հոգևոր իշխանութիւնն պարտք պէտք է դնէ կատարելու այդ գործը, իսկ կիսաշէն վանքերի և նոցա շրջակաների վերաբերութեամբ նոյն պարտքը կարելի է դնել վանահայրների կամ միաբանների վերայ: Յայտնի բան է սա պաշտօնական ճանապարհն է գործի սկզբնաւորութեան համար: Բայց մենք կարծում ենք, որ երբ գործը սկսուի, մեծ նպաստ կլինին գործի յաջողութեան և մեր ծխական դպրոցների ուսուցիչներն, որոնք միշտ ընդհանուր ազգային գործի համար ոգևորուած են և եռանդ ունին, նոքա իրանց հոգևոր հայրերից յետ չեն մնալ նախանձախնդրութեան մէջ այսպիսի մի նշանաւոր գործի յաջողութեան վերաբերութեամբ: Կարծում ենք, որ չեն զլանալ իրանց աշխատանքն, «ւ ջանքն այսպիսի օգտաւէտ գործի համար մեր թեմական տեսուչներն էլ և այն բազմաթիւ գրագէտ հայ անձինք, որոնք իբրեւ պաշտօնատարներ կամ գործակատարներ կամ բժիշկներ ցրուած են մեր ամեն թեմերում:

Ի վերջոյ կարծում ենք, որ և մեր հասկացող հարուստ անձինք էլ, հասկանալով գործի սրբութիւնն ու վսեմութիւնը, չեն զլանալ գէթ իրանց նիւթական նպաստն այն անձանց, որոնք ճիգն կդնեն մեր պատմական հոլութեանց յիշատակները յաւերժացնել, թէ նոցա նկարները հանելով և թէ նոցա նկարագրութիւնքը ճշտութեամբ անելով և բացատրելով:

Այսպէս ամենքն էլ իրանց կարողութեան չափ գործի ծանրութեան մի մասն իրանց վերայ առնելով, նորա յաջողութեան երաշխաւոր կարող են լինել: Ժամանակը կորցնելու չէ, որովհետեւ իւրաքանչիւր անցած օրը պահանջում տանում է իւր զօհը — և մեր կորուստն օր աւուր աւելանում է և այս այնպէս, որ կորցրածը այլ ևս յետ դարձնելու հնար չի լինում: Ուրեմն գէպի գործ առանց յապաղման: Տարակոյս չկայ, որ գործի սկզբնաւորութիւնը հոգևոր իշխանութեանց կվերաբերի, որոնք ուր հարկն է հրաման կտան և ուր հարկն է հրաւէր կկարգան: